ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԾՁԲ-20-10/3-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 17 **-ը մարտի 2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յուլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Պատվիրատու», մի կողմից և **«ԴԱՌԵՍ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ն. Քոսակյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ այսուհետև՝ «Կատարող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **06.12.2019թ.** կնքված № **ԳՀԾՁԲ-20-10/3-1**գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայությունների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Կատարողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ծառայությունների (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր **առավելագույն** գինը կազմում է ***20,000,000 (քսան միլիոն) ՀՀ դրամ***, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն իրեն հանձնած Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, **բայց ոչ ուշ, քան 25.12.2020թ.:**

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայությունների մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխա-նատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 4 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:**

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024537
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԴԱՌԵՍ» ՍՊԸ
Ք. Երևան, Գալշոյան փ. 36շ., բն.1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570023676140100
ՀՎՀՀ 02624964
տնօրեն

Ն. ՔՈՍԱԿՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-10/3-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ծառայության անվանում	Առավելագույն գին /ՀՀ դրամ/	Գնման ժամանակացույց
1.	**Կահույքի վերանորոգման և պահպանման ծառայություններ այդ թվում՝**		
	(Գրասենյակային գույք և կահույք, զինվորական և հոսպիտալային մահճակալներ)	20,000,000	Ծառայությունների մատուցումը կիրականացվի 2020 թ. ապրիլ-նոյեմբեր ամիսների ընթացքում, բայց ոչ ուշ քան 15.12.2020թ.

Ծանոթություն՝

Ծառայությունն իրականացվում է պատվիրատուի կողմից տրված հայտերի հիման վրա՝ վերանորոգման ենթակա ապրանքը կատարողին հանձնելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում,
Վերանորոգման վայր տեղափոխումը իրականացվում է ԿՇ և ԶԲ վարչության միջոցներով,
Վերանորոգված ապրանքները կատարողը մատակարարում է ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲ վարչության կենտրոնական պահեստ՝ քաղաք Երևան, Արշակունյաց 135 հասցեով

Հ/հ	Տեխնիկական բնութագիր	Հ/Մ	Առաջարկվող մեկ միավորի գները /ՀՀ դրամ/
Կահույքի վերանորոգման և պահպանման ծառայություններ այդ թվում՝			
	Գույքի և կահույքի վերանորոգում		
1	Պողպատե 25*25*2,5մմ չափի անկյունակի փոխարինում	գծմ	1,018
2	Պողպատե Dա=32*2,5մմ չափի խողովակի փոխարինում	գծմ	1,197
3	Պողպատե Dա=25*2,5մմ չափի խողովակի փոխարինում	գծմ	1,061
4	Պողպատե Dա=25*2մմ չափի խողովակի փոխարինում	գծմ	927
5	Պողպատյա 2մմ հաստ. թիթեղի փոխարինում	մ²	12,773
6	Պողպատյա 3մմ հաստ. թիթեղի փոխարինում	մ²	19,377
7	Մետաղական պահարանի ներդրովի փականքի փոխարինում	հատ	8,963
8	Անվակի փոխարինում /մետաղական պահարանի, Φ60մմ/	հատ	3,351
9	Պողպատե կառուցամասերի արտաքին մակերևույթների մաքրում հին ներկից և ժանգից	մ²	718
10	Պողպատե կառուցամասերի արտաքին մակերևույթների ներկում 2 անգամ	մ²	1,225
11	Փայտի վրա երեսաքաշված ցինկապատ 0,3մմ հաստ. թիթեղի փոխարինում	մ²	2,762
12	Բրեզենտատիպ կտորի փոխարինում	մ²	1,694
13	Կտորի փոխարինում	մ²	1,841
14	Սպունգի փոխարինում, 1սմ հաստ. /խտությունը՝ 1քմ-ում 0,35կգ /	մ²	995
15	Սպունգի փոխարինում, 3սմ հաստ. /խտությունը՝ 1քմ-ում 1,05կգ /	մ²	2,459
16	Կահույքի նրբատախտակի 4մմ հաստ. փոխարինում	մ²	4,251
17	Կահույքի նրբատախտակի 10մմ հաստ. փոխարինում	մ²	7,251
18	Կահույքի նրբատախտակի 12մմ հաստ. փոխարինում	մ²	8,251
19	Կահույքի փայտատաշեղային 16մմ հաստ. սալի փոխարինում	մ²	5,599

20	Կահույքի փայտամաշեղային երկկողմանի լամինացված 18մմ հաստ. սալի փոխարինում	մ²	7,161
21	Կահույքի լամինացված 18մմ հաստ. ՄԴՖ սալի փոխարինում	մ²	10,734
22	Կահույքի ՄԴՖ-ի 30մմ հաստ. սալի փոխարինում	մ²	13,213
23	Փայտե դետալների փոխարինում	մ³	307,601
24	Փայտյա մակերևույթների բարելավված ներկում	մ²	1,898
25	Հեղույս, մանեկ/արժեքը /	կգ	1,652
26	Պտուտակ/արժեքը /	կգ	1,781
27	Ժապավեն ապակե թելից /արժեքը/	100մ	3,059
28	Ծխնու փոխարինում	հատ	998
29	Կահույքի սահուղու փոխարինում	հատ	1,268
30	Կահույքի ծխնու փոխարինում	հատ	730
31	Բռնակի փոխարինում	հատ	416
32	Փայտե պատրաստվածքների ներդրովի փականքի փոխարինում	հատ	1,603
33	Պլաստմասե տակդիր խցանի՝ հարթ կամ կցաշուրթով, փոխարինում	հատ	42
34	ՄԴՖ-ից ձևավոր ոտնակի փոխարինում 5*5սմ, երկար. 70սմ չափի	հատ	2,213
35	ՄԴՖ-ից ձևավոր ոտնակի փոխարինում 6*6սմ, երկար. 70սմ չափի	հատ	2,699
	Զինվորական և հոսպիտալային մահճակալների վերանորոգում		
36	Գլխամասի ոտքերի և կամարի Dա=32*2մմ պողպատե խողովակի փոխարինում	գծմ	1,278
37	Գլխամասի լայնական ճաղերի Dա=21*2մմ պողպատե խողովակի փոխարինում	գծմ	956
38	Գլխամասի ուղղահայաց ճաղերի Dա=13*1մմ պողպատե խողովակի փոխարինում	գծմ	680
39	Ականջիկի փոխարինում /53*38*4 մմ չափի/	հատ	161
40	Ցանցի շրջանակի 40*40*4մմ չափի պողպատե անկյունակի փոխարինում	գծմ	1,840
41	Զսպանակի փոխարինում /3մմ հաստ. զսպանակի մետաղալարից/	հատ	417
42	Կեռիկների փոխարինում /3մմ հաստ. 110 և 135մմ երկար. չջերմամշակված պողպատե/	հատ	16
43	Տափօղակների փոխարինում /1,5մմ հաստ., 10-12մմ ներքին տրամագծով /	հատ	13
44	Պողպատե կառուցամասերի արտաքին մակերևույթների մաքրում հին ներկից և ժանգից	մ²	718
45	Պողպատե կառուցամասերի արտաքին մակերևույթների ներկում 2 անգամ/նիտրոէմալ/	մ²	1,225
ԸՆԴԱՄԵՆԸ*			**450,085**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ս. ՅՈԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԴԱՌԵՍ» ՍՊԸ
տնօրեն

«ԴԱՌԵՍ»
"DARES"
"ДАРЕС"
02624964

Դ. ԹՈՍՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-20-10/3-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանում	Առավելագույն գին /ՀՀ դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝								
	Կահույքի վերանորոգման և պահպանման ծառայություններ այդ թվում՝		Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 25.12.20թ.
1.	(Գրասենյակային գույք և կահույք, Զինվորական և հոսպիտալային մահճակալներ)	20,000,000	8,000,000	8,000,000	8,000,000	16,000,000	16,000,000	16,000,000	20,000,000	20,000,000	20,000,000

CPV -50851100/501

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«ԴԱՌԵՍ» ՍՊԸ
տնօրեն

Ն. ՔՈՉԱՐՅԱՆ